

ԵՐԴՈՒՄ ԸՆԵԼՈՒ ՅՈՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յոռի բոլոր սովորութիւնները, ուր ալ ըլլան անոնք, վատ են, բայց երգումը աւելի վատ մոլութիւն է եւ անօրէն սովորութիւն մըն է: Սատանան այնքան կը յիմարեցնէ այս սովորութեան մոլութեան մէջ, որ այս սովորութեան ընտելանալով՝ այլեւս չարիքը չարիք չի թուիր: Այսպէս, կը տեսնենք շատեր, որոնց Սատանան սորվեցուցած է անօրէն կերպով երգում ընել եւ անոնցմէ ո՛չ ոք իր սրտին մէջ անօրէն մեղք մը գործած ըլլալու երկիւղը ունի: Թէեւ Հին Կտակարանի մէջ [Սատանա՛] ըսած է. «Բու Տէր Աստուծոյդ միայն պիտի երգնու» (Բ. Օրինաց 6:13) սակայն ասով երգում կատարելու հրամանը չհաստատեց, այլ՝ ուզեց անոնց տղայական միտքերը կուռքերու անունով երգում կատարելու հեռացնել: Արդարեւ, անոնք անմիջապէս չէին կրնար բոլոր կատարելութիւնները ընդունիլ, այլ գանձեցին կ'ընտելացնէր այնպէս, ինչպէս կ'ընտելացնէին անվարժ աւանակները: Եթէ ըսէք. «Բնաւ երգում մի ընէք», թեւեւ չեք գիտէին, եթէ պիտի երգնում, Տէր Աստուծոյն պիտի երգնում: Իսկ Նոր Կտակարանին մէջ Քրիստոս կատարելութեան հասած հրամաններ պատուիրեց եւ բոլորովին ջնջեց սատանայական երգումները: «Մովսէս կ'ըսէ. սուտ երգում մի՛ ընէք: Իսկ ես կ'ըսեմ՝ ձեզի՛ բնաւ երգում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ, որովհետեւ Աստուծոյ գահին է, ո՛չ երկրի վրայ, որովհետեւ անոր ոտքին պատանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ, որովհետեւ մեծ Թագաւորին՝ Աստուծոյ, փառաբան է եւ ոչ ալ քու գլխու վրայ երգում ըրէ, որովհետեւ չես կրնար մագ մը իսկ ներմկցնել կամ սեւցնել»:

ԻՒՂ

Հայ եկեղեցւոյ ծիսական արարողութեանց մէջ կիրարկուած իւղը յիմնականօրէն Ս. Միլտոնն է, որուն մասին պիտի անդրադառնանք առանձնաբար:

Իսկ իւղ հասկացողութեամբ պետք է իմանանք ձեռքի գործածութիւնը:

Եօթը սրբազան խորհուրդներուն վերջինը Կարգ Հիւանդաց կամ Վերջին Օծումն է: Անցեալին ծանր հիւանդները մասնաւոր օրհնուած ձեռքով կ'օծէին, որ բուժման իբրեւ միջոց կը ծառայէր:

Վերջին օծման կարգն էր այս, որ մինչեւ այօր Կաթոլիկ եկեղեցին կը գործադրէ: Իսկ հայ եկեղեցւոյ մէջ դադրած է Վերջին Օծումը եւ որպէս Կարգ Հիւանդաց, քահանայ հայրերու հիւանդներու այցելութիւնն է, որ մասնաւոր իր ծիսական կարգը ունի, բժշկութեան Աւետարանի ընթերցումով եւ «Փարատեա զցաւս եւ հիւանդութիւնը...» աղօթքի արտասանութեամբ:

Անցեալին օրհնուած ձեռքի երկրորդ առիթը եղած է նախօրէն մկրտութիւնը՝ երախտի օծումը, ինչ որ այսօր ասիկա եւս դադրած է կիրառութենէ:

Իսկ պարզ իւղը, որպէս ձեռք, եկեղեցւոյ կանթեղները լուսաւոր պահելու կը ծառայէ:

Իւղի գործածութիւնը, որպէս կարգ, մենք կը հանդիպինք Ոսմունայի աքարադրութեան մէջ, երբ հանդիսադիր եկեղեցականը քահանայ հայրերու եւ դպիրներու ոտքերը լուսելու համար, կարագով կը խաչակնէ անոնց լուսուցուած ոտքերը:



ԲՈՒ ԽՈՍԵՂ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸՄԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ 2022

ԹԻՒ 17

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գրծ. 5.34-6.7 Յկ. 3. 1-12: Յհ. 1.1-17

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎԱՆՆԵՍ 1.1-17

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անկիս սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր, որ Աստուած ամէն ինչ ստեղծեց, առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է, որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ դրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր անկիս, աշխարհը իր մով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը: Փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:


Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով. «Ասիկա է ան, որուն մասին կ'ըսէի. "Ան որ ինձմէ առաջ գոյութիւն ունէր"»:

Անոր լիառատ շնորհքէն է, որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Ուշագրաւ է համարին տրամաբանական ընթացքը: Նախ կը հաստատուի, թէ Բանը «սկիզբէն էր»: Երկրորդ, մեզի կ'ըսուի, թէ ան Աստուծմէ անկախօրէն ապրող գոյութիւն մը չէր, այլ «Աստուծոյ հետ էր», եւ երրորդ, կը ճշդուի այն հանգամանքը, որով ան կը ներկայանար «Բանը Աստուած էր»: Այս իմաստով, Յովհաննէսի աւետարանը իր առաջին համարով երեք կարեւոր հարցումներու պատասխան կու տայ.- ա) Ե՞րբ կար Որդին՝ «սկիզբէն էր»: բ) Ո՞ր էր Որդին՝ «Աստուծոյ հետ էր»: գ) Ի՞նչ էր Որդին՝ «Աստուած էր»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)



Ս. Զատիկի յաջորդող Կիրակին կը կոչուի Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ: Յիսուս Յարութենէն յետոյ յամախակի առիթներով երեւցաւ Իր աշակերտներուն: Յարութեան ութերորդ օրը, Յիսուս դարձեալ երեւցաւ անոնց: Այնտեղ էր նաեւ Թովմաս առաքեալը, որ Յարութեան օրը չէր տեսած Տէրը եւ ըսեր էր. «Մինչեւ, որ գամբրուն հետեմբը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամբրուն տեղերը եւ ձեռքս չդրեմ անոր կողին, չեմ հաւատար» (Յովհ. 20.25): Յիսուս կը հրաւիրէ Թովմասը, որ իր ձեռքերը կողին մէջ իրէ եւ շօշափէ: Բայց ան միայն կը բացագանչէ՝ «Տէ՛րս եւ Ա՛ստուածս»:

Յիսուս կ'ըսէ անոր. «Զիս տեսնելուդ համար հաւատացիր, չէ՞: Երանի՛ անոնց, որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան»: Եկեղեցին, այս յիշատակը կը տօնէ, որպէս նաւակատիֆ Զատիկի: Յոյները Նոր Կիրակին կը կոչեն ԹՈՎՄԱՅԻ ԿԻՐԱԿԻՆ: Կիրակի կամ Կիրակէ յունարէն բառ է, որ կը նշանակէ Տէրունի օր:

Սկզբնական շրջաններուն տարածուած չէր Կիրակի բառը, այլ՝ կը գործածուէր Միաշաբաթ անունը, որպէս շաբթուան առաջին օրը, երբ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն: Հետագային է, որ Միաշաբաթի փոխարէն տարածուեցաւ յունարէն Կիրակի բառը:

Կիրակի օրուան համար Առաքելական 34 կանոններու երկրորդը հետեւեալ հրահանգը կու տայ. «Բոլոր Կիրակի օրերը տօն կ'ըլլայ եւ պատարագ կը կատարուի, կը կարդացուին մարգարէական Գիրքեր եւ առաքելական Նամակներ, եւ ապա կը կարդացուի Ս. Աւետարան»:

Քրիստոնեաներուն համար Կիրակի օրը հանգստեան օր է: Սակայն սիրելի ընթերցող, հանգիստը տունին մէջ ամբողջ օրը հանգիստ ընել չէ, ո՛չ ալ մինչեւ ուշ ժամեր քնանալ: Ֆիզիքական հանգիստէն աւելի կարեւորը՝ հոգիի հանգստութիւնն է: Եւ այդ հանգստութիւնը կը զգանք պատարագի մասնակցութեամբ, աղօթքով: Կիրակին չանցրենք քնանալով կամ դատարկ գործերով, այլ՝ աղօթքով:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ

Զատիկուան յաջորդող Կիրակին է: Յայտնի է, որ Քրիստոսի յարութեամբ միաշաբաթ օրը նուիրագործը եւ դարձաւ Կիրակի, ուստի անոր յաջորդող միաշաբաթը կոչուեցաւ Նոր Կիրակի կրկնագատիկ՝ Կրկին Զատիկ: Նոր Կիրակին կը խորհրդանշէ Քրիստոսի եկեղեցւոյ հաստատման եւ ծաւալման սկիզբը:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՄԱՔՐԵՆՔ ՄԵՆՔ ՁՄԵՉ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԻՂՈՎ, ՈՐՊԷՍՁԻ ԱՏՈՒՄԸ ՅԱՆՎԱԿ ՄԵՐ ԳԵՂԵՅԿՈՒԹԵԱՆ

Մաքրենք մենք զմեզ Սուրբ Հոգիին իւղով, որպէսզի Աստուած ցանկայ մեր գեղեցկութեան: Պարսկական տիրապետութեան ժամանակ ընդունուած սովորութիւն էր, որ երբ թագաւորը նոր թագուհի մը պիտի ընտրէր, թագուհին պէտք էր 12 ամիս շարունակ ինքզինք մաքրէր «զմուշի իւղով», «անուշահոտ խունկերով» եւ այլ բաներով, եւ անկէ ետք միայն բերուէր թագաւորին ներկայութեան (տես Եսթ. 2.12):

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Դիւրին է այս ճշմարտութիւնը հասկնալ հոգեւոր իմաստով մը: Ինչպէս կոյսերը իրենք զիրենք յատուկ իւղերով եւ անուշահոտ խունկերով կը մաքրէին եւ յետոյ միայն կը մօտեցուէին թագաւորին, այնպէս ալ մենք, պէտք է մենք զմեզ մաքրենք եւ պատրաստենք Սուրբ Հոգիին իւղով, Աստուծոյ խօսքին խունկով, աղօթքով եւ խոկումով, անկէ ետք միայն մօտենալու համար Աստուծոյ: Որքան օծուինք Սուրբ Հոգիին իւղով՝ այնքան աւելի հոգեւորապէս կը գեղեցկանանք, եւ ուստի, այնքան աւելի սիրելի կը դառնանք մեր երկնաւոր Հօր, եւ այնքան աւելի ան կը ցանկայ մեր գեղեցկութեան (հմմտ. Մդ. 45.11):

ԵՅԵ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

Նեղութեան օրը ինծի կանչէ, եւ քեզ պիտի ազատեն ու դուն զիս պիտի փառաւորես: (Մաղմ. 50.15):

Ասիկա իսկապէս պատուական խոստում մըն է: Ահաւասիկ նեղ եւ ստիպողական պարագայ մը, «նեղութեան օրը»: Այսպիսի օրուան մը կէսօրն անգամ մտի՛ է եւ իւրաքանչիւր անցնող ժամ նախորդէն աւելի մտի՛ կը թուի: Ու այս խոստումը ճիշդ այսպիսի մտի՛ ու ամպոտ օրուան մը համար է:

Ահաւասիկ քաջայերիչ խրատ մը. «Ինծի կանչէ՛»: Ասիկա ընելու համար յորդորի պէտք չունիք, ասիկա մեզի բնութիւնը ըլլալով է, Անոր կանչել ամէն օր եւ օրուան որեւէ ժամուն: Ի՛նչ մեծ ողորմութիւն է Աստուծոյ կանչելու արտօնութիւնը ունենալ եւ ի՛նչ մեծ իմաստութիւն է այդ արտօնութիւնը լաւագոյնս գործածելով մեծագոյն չափով անկէ օգտուել: Ի՛նչ յիմարութիւն է «Նեղութեան օրը» մարդոց դիմել: Տէրը կը հրաւիրէ մեզ, որ մեր խնդրանքները Իրեն տանինք եւ Իր առջեւ պարզենք: Մենք պիտի ընդունինք այս հրաւերը եւ պիտի չուշանանք այսպէս ընելու:

Ահաւասիկ մեծ խոստում մը՝ «Ես քեզ պիտի ազատեմ»: Ինչ որ ալ ըլլայ քու դժուարութիւնդ, Աստուծոյ համար բնաւ տարբերութիւն չընեն եւ Անոր քով ոչինչ կայ անկարելի: Խոստումը միշտ նոյնն է, ապահով եւ ուրախ ազատութիւն, անձամբ Իր ձեռքովը գործուած: Հաւատանք Իրեն ու Ան պիտի պատուէ մեր հաւատքը:

Ահաւասիկ սքանչելի վերջաւորութիւն մը. «Դուն զիս պիտի փառաւորես»: Քու ակնկալածէդ շատ աւելի գոհ պիտի մնաս քու աղաղակիդ պատասխանէն ու Զինքը պիտի գովես: Ո՛հ, ասիկա ընենք քանի որ վստահ ենք, թէ Անիկա հաւատարիմ է Իր խոստումը կատարելու ամէն գնով: